

ԴԻՄՈՒՄ

Բռննում երեքշաբաթյա հանգիստ անցկացնելու և Կարդինալ-Ֆրինգու գիմնազիա հաճախելու համար



ՄԵՆՔ

Կարդինալ-Ֆրինգու գիմնազիան ենք, Քյոլնի պատրիարքարանի դպրոցը՝ ավելի քան 1000 դպրոցականներով: Մեր դպրոցը գտնվում է Լյուդվիգ վան Բեթհովենի ծննդավայր Բռննում, Հռենոսի ափին: Բռննը երկար տարիներ Գերմանիայի մայրաքաղաքն էր, իսկ այսօր այն ժամանակակից արդյունաբերական կենտրոն է: Բռննից ոչ հեռու գտնվում է միլիոնանոց քաղաք Քյոլնը՝ իր աշխարհահռչակ Քյոլնի տաճարով:

Երկար տարիներ ի վեր մենք ջերմ բարեկամական կապեր ենք պահպանում Հայաստանի հետ: Մեր դպրոցական ծրագրի շրջանակներում մենք կարող ենք շատ հայկական դպրոցների ֆինանսապես աջակցել: Մեզ համար կարևոր են նաև փոխադարձ այցելություններն ու մեր հայ բարեկամների հետ միասին լինելը:

Հաճույքով կրկին հրավիրում ենք հայ աշակերտներին ու աշակերտուհիներին՝ երեք շաբաթ մեզ հետ միասին անցկացնելու: Նրանք ապրելու են մեր դպրոցականների ընտանիքներում, մասնակցելու են դասերին և ճանաչելու են մեր մարզը: Հյուրընկալող ընտանիքների հետ պայմանավորվածության ձեռքբերման և ինքնաթիռի տոմսերի մասին հոգում ենք մենք:

ԴՈՒ

- արդեն ունեն գերմաներենի լավ գիտելիքներ.
- հետաքրքրվում ես այլ երկրներով, մարդկանցով և մշակույթով.
- հետաքրքրված ես գերմաներեն լեզվով և մշակույթով.
- ցանկանում ես երեք շաբաթ գերմանական ընտանիքում ապրել.
- ցանկանում ես երեք շաբաթ մեր դպրոցի դասերին մասնակցել.

ԱՅՆ ԴԵՂՔՈՒՄ ՄԻՆՉԵՎ 19.12.2011Թ. ՈՒՂԱՐԿԻՐ ՔՈ ԴԻՄՈՒՄԸ

Մեզ ուղղված դիմումի մեջ պետք է լինի նաև

- քո անունը, ազգանունը, ծննդյան թիվը.
- քո ընտանիքի հասցեն.
- քո դպրոցի և գերմաներենի ուսուցչի անունը.
- էլեկտրոնային փոստի հասցեն, որով կարելի է կապնվել քեզ հետ.
- քո կողմից կարճ մի գրություն հետևյալ թեմայով.
«Ինչ ակնկալիք ունեմ Գերմանիա իմ այցելությունից»:

Քո դիմումը ուղարկիր էլեկտրոնային փոստով տիկին Յուլիա Քրամերին.

Julia.Kramer@tbilissi.goethe.org

Տիկին Քրամերը դիմումը քո փաստաթղթերի հետ կփոխանցի մեզ:

Մենք հունվարի սկզբին էլեկտրոնային փոստով քեզ տեղեկություն կուղարկենք:

Նրան, ում մենք կընտրենք, կհրավիրենք Երևան հարցազրույցի:

Ճանապարհի ծախսը կվերադարձվի անմիջապես, տիկին Քրամերի մոտ:

ՄԵՆՔ

Ցանկանում ենք քեզ մեծ հաջողություն: